



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
05 դեկտեմբերի 2023 թ.


ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ


Ալավերդի համայնքի ավագանու՝ 2023 թվականի դեկտեմբերի 05-ին ժամը 10.00-ին օրենքի ուժով հրավիրված թիվ 15 նիստի ընթացքում նիստերի դահլիճ մուտք գործեցին Ա. Թամազյանը մի շարք անձանց հետ: Նրանցից մեկը վերցնելով քվեատուփը, բարձր բացականչելով, սկսվեց քաշքշուք, որի արդյունքում քվեատուփը բացվեց և խախտվեց գաղտնի քվեարկության գործընթացը: Նիստը վարողի կողմից հայտարարվեց որ անհրաժեշտ է քվեաթերթիկները մարել և նոր քվեարկություն սկսել՝ պահպանելով գաղտնիության սկզբունքները:


Հաշվի առնելով, որ Արկաղի Թամազյանը և ավագանու մյուս անդամները մուտք էին գործել նիստերի դահլիճ, նիստը վարողի և լիազոր մարմնի ներկայացուցչի կողմից առաջարկեցին մասնակցել օրենքի ուժով հրավիրված նիստին: Սակայն հանդարտնվելու հորդորները ոչ միայն չընդունվեց այլև փորձ արվեց քվեատուփու փակումը անհանգստացնելու, խառնաշփոթ առաջացնելու: Ա. Թամազյանը հրապարակային հրաժարվեց և կոչ արեց մյուս ավագանու անդամներին դուրս գալ համայնքապետարանի շենքից:

Նիստը շարունակեցվեց բնականոն կերպով. Այն է՝ փակ գաղտնի քվեարկությամբ կատարվեց քվեարկություն և հաշվիչ հանձնաժողովի կողմից հրապարակային հայտարարվեց քվեարկության արդյունքների մասին և այնուհետև նիստը վարողի կողմից նշվեց որոշման ընդունման մասին:

Ավագանու անդամներ՝

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ 

ԴԱԼԼԱԹՅԱՆ ԱՐԵՆ 

ԵՐԻՑՅԱՆ ԱՐՄԻՆԵ 

ԶԱԽԱՐՈՎ ՍԻՄՈՆ 

ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ ՖԼՈՐԱ 

ՀԱՆՎԵՐԴՅԱՆ ՀՐԱՆՏ

ՁԱՎԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԼՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՋԱՆԻՆՅԱՆ ԱՄՐԱՍՏԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՐԱ

ՍՄԲԱՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀԱՅԿ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

ՍԻՄՈՆ ՉԱԽԱՐՈՎ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ